ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«------» ---------- 2019թ. N-----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի
N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի «Քաղաքաշինական-նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» հ.405-Ն որոշման հավելվածի 5-րդ կետը «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունը» բառերից հետո լրացնել «, աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայությունը» բառերով։

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 219[1] հոդվածի (այսուհետ՝ Հոդված) 2-րդ մասի՝ տեղական ինքնակառավարման մարմինները քննում են Օրենսգրքով սահմանված մի շարք հոդվածներով, այդ թվում նաև Օրենսգրքի 157.15-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը։

Համաձայն նույն հոդվածի 4-րդ մասի՝ տեղական ինքնակառավարման մարմինների անունից Երևան քաղաքում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունեն Երևանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձինք։ Համաձայն Երևանի քաղաքապետի 2012 թվականի փետրվարի 3-ի հ.883-Ա որոշման՝ աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակիցներին վերապահվել է լիազորություն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու համար։

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով, այլ իրավական ակտերով համայնքի ղեկավարին քաղաքաշինության ոլորտում վերապահված լիազորությունների մասով քաղաքային նշանակության քաղաքաշինական գործունեության ոլորտում լիազորությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը: Քաղաքային նշանակության քաղաքաշինական գործունեություն է համարվում այն ամենը, ինչն իրականացվում է քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտում կամ բավարարում է որոշակի պայմանների, ինչպես նաև Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետը հետևում է Երևան քաղաքի ավագանու հաստատված կանոնների պահպանմանը, որի համար Օրենքի 56-րդ 2-րդ մասի համաձայն՝ Երևանի քաղաքապետը ստեղծում է հասարակական կարգի պահպանության ծառայություն։

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն փաստը, որ Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ին ընդունված հ.405-Ն որոշման հավելվածի 5-րդ կետում չի նշվել աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության անվանումը, առաջացել է նշված որոշման հավելվածում համապատասխան լրացում կատարելու անհրաժեշտություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. Մ Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի հ.405-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չկա։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի հ.405-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ